
ԷԴՄՈՒՆԴ ԲԸՐՔԸ ՈՐՊԵՍ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՅԱԿԱԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ

ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Անգլիայում պահպանողական կուսակցության ձևավորումից (1832 թ.) առաջ՝ 18-րդ դարի վերջին, արդեն ծնունդ էր առել քաղաքական պահպանողականությունը՝ առաջին հերթին որպես արձագանք ֆրանսիական հեղափոխության: Կասկածից վեր է, որ պահպանողականությունը սերտորեն կապված է տվյալ երկրի պատմական, մշակութային, քաղաքական, տնտեսական, սոցիալական պայմանների հետ: Անգլիայում քաղաքական պահպանողականության հիմնադիրն իրավամբ համարվում է 18-րդ դարի քաղաքական ականավոր գործիչ Էդմունդ Բըրքը (1729-1797): Այդ առումով հատկապես կարևոր է նրա «Մտորումներ ֆրանսիական հեղափոխության վերաբերյալ» աշխատությունը: Յեղիմակն իր առջև բնավ նպատակ չի դրել գալիք սերունդներին հաղորդելու հավերժական ճշմարտություններ: Այդուհանդերձ գրքում արծարծված են այնպիսի հարցեր, որոնք այսօր ևս չեն կորցրել իրենց իմացական-ճանաչողական արժեքը:

18-րդ դարի վերջին Անգլիայում ընտրական բարեփոխումների անցկացման համար բավական ակտիվ պայքար էր ծավալվել: Եթե 1770-ական թվականներին աղանդավորական շարժման ներկայացուցիչները (Protestant Dissenters) պայքարում էին Անգլիկան եկեղեցու գերիշխանության դեմ, ապա 1780-ական թվականներից այդ պայքարը վերածվեց հանուն ազատության, մարդու, քաղաքացու իրավունքների պաշտպանության պայքարի¹:

Ֆրանսիայում սկիզբ առած հեղափոխությունը լավագույն առիթ էր անգլիացի արմատական աղանդավորականների համար՝ առավել ակտիվ պայքար ծավալելու հանուն քաղաքական ազատությունների: 1688 թ. անգլիական «Փառապանծ» հեղափոխության հարյուրամյակի առթիվ 1789 թ. նոյեմբերին Անգլիայում գործող արմատական կազմակերպություններից Յեղափոխական ընկերակցության կազմակերպած հավաքներից մեկում ելույթ է ունենում նրա ականավոր ներկայացուցիչ Ռիչարդ Փրայսը, որը ուշագրավ զուգահեռներ է անցկացնում 1688 թ. անգլիական և 1789 թ. սկիզբ առած ֆրանսիական հեղափոխությունների միջև:

Փրայսը քննադատում էր կառավարությունների մեծ մասին՝ նրանց համարելով «մարդու իրավունքների բռնատիրության» մարմնավորում, և առաջադրում էր գործող հաստատությունների (ներառյալ կրոնական) վերացման արմատական գաղափարը, ընդգծում աղանդավորների նկատմամբ անարդարությունների մասին, այդ թվում՝ քաղաքական անհավասարությունների հանգամանքը, որից էլ բխեցնում էր անարդար քաղաքական ներկայացվա-

¹ Տե՛ս **Frank O’Gorman**, *The Long Eighteenth Century, British Political and Social History 1688-1832*, London, 2006, էջ 308:

ծության փաստն Անգլիայում²: Խոսելով եկեղեցու մասին՝ Փրայսը ցավով նշում էր, որ «այն ծիսակատարությունը, որը մեր Փրկչի կողմից կարգադրված էր իր մահը նշելու համար, վերածվել է քաղաքական ճնշող գործիքի»³:

Փրայսի հիմնական ուղերձն այն էր, որ գոյություն ունի ժողովրդական ինքնիշխանության (սուվերենության) հասկացություն, ըստ որի՝ իշխանությունը «ժողովրդի կողմից է վստահություն ստացել», և բրիտանական միապետությունը «ժողովրդի ընտրությունն է»⁴: Նա գտնում էր, որ կա սրբազան, անձեռնմխելի երեք սկզբունք: «Առաջինը կրոնական հարցերում խղճի ազատության իրավունքն է, երկրորդը՝ չարաշահվող իշխանությանը դիմադրություն ցույց տալու իրավունքը, իսկ երրորդը՝ մեր կառավարիչներին ընտրելու, վատ կառավարման համար նրանց վտարելու և մեզ համար կառավարություն ձևավորելու իրավունքը»⁵: Փրայսը, զովաբանելով 1688 թ. անգլիական հեղափոխությունը, գտնում էր, որ պետք է ընդլայնվեն ազատության սահմանները: Դրանով Փրայսը փաստորեն առաջադրում էր հասարակական-քաղաքական որոշակի ծրագրով նոր շարժում ծավալելու գաղափար:

Ի հակադրություն դրա՝ ընդամենը երեք ամիս անց՝ 1790 թ. փետրվարին, հանդես է գալիս Էդմունդ Բրոքը, որը Փրայսի ծրագիրը որակում է «սահմանադրության, այս երկրի բարգավաճման համար չափազանց վտանգավոր»: «Կասկած չունեն, - ասում է նա, - որ ձևավորվել է մեծ խմբակցություն և հետևողականորեն առաջ է շարժվում սահմանադրության ամենակենսական մասերի կործանման ուղիով»⁶: Հանձին «Յեղափոխական ընկերության»՝ Բրոքը նկատի ուներ բոլոր արմատական ուժերին, ներառյալ նաև որոշ ազնվականների, որոնք իրենց առջև խնդիր էին դրել Անգլիայում իրականացնելու արմատական փոփոխություններ: Այդ տեսակետից ֆրանսիական հեղափոխությունը ավելի ակտիվ գործողությունների դիմելու լավագույն ազդակ էր: Սա էր պատճառը, որ անգլիական քաղաքական գործիչներից Բրոքն առաջինը հեղափոխությունը գնահատեց որպես անգլիական հասարակական և պետական սկզբունքներին ուղղված լուրջ սպառնալիք⁷:

Ժողովրդի՝ որպես իշխանության աղբյուրի գաղափարը (որն արմատականները հնչեցնում էին երկու տեսակետներից՝ 1688 թ. միապետի ընտրված լինել-չլինելու և 1790-ական թթ. քաղաքական ներկայացվածության ընդլայնման հանգամանքներով) բացարձակապես անընդունելի էր Բրոքի համար, և իր պատասխանի զգալի մասը նվիրում է այն արժեզրկելուն:

1688 թ. հեղափոխության հետևանքով Հակոբ 2-րդ թագավորին փոխարինեց իր փեսա Ուիլիամ Օրանացին, որին դեպի գահ տանող միակ ուժը նրա կինն էր՝ Հակոբ 2-րդի դուստր Մերին: Հետևաբար Բրոքը հարկադրված ընդունում է, որ միապետության ժառանգական շարունակականության մեջ տեղի է ունեցել խախտում: «Անկասկած, հեղափոխության

²Տե՛ս **Richard Price**, *Political Writings* (ed. D. Thomas), Cambridge, 1991, էջ 191-192:

³Նույն տեղում, էջ 191:

⁴Նույն տեղում, էջ 186:

⁵Նույն տեղում, էջ 189-190:

⁶**Edmund Burke**, *The Correspondence of Edmund Burke*, 10 volumes (ed. Thomas Copeland and John Woods), Cambridge-Chicago, 1958-1970, vol. 6, p. 83.

⁷Տե՛ս **Frederick Dreyer**, *The Genesis of Burke's Reflections*. // *The Journal of Modern History*, vol. 50, 3, 1978, էջ 462:

ժամանակ, հանձին Ուիլիամի, փոքրիկ և ժամանակավոր շեղում է տեղի ունեցել կանոնավոր ժառանգական շարունակականության ճշգրիտ կարգից»: «Շարունակականության այս ժամանակավոր կարգավորումը» թույլ էր տրվել այն բացառիկ պայմանների առկայության պարագայում, որում հայտնվել էր Անգլիան: Հակոբը ձախողված միապետի համբավ ունեցավ: Բըրքի կարծիքով, մարդիկ չէին ցանկանում ո՛չ նրան գահընկեց անել, ո՛չ էլ երկրի կրոնը, օրենքները և ազատությունները մեկ այլ քաղաքացիական պատերազմի արհավիրքներին ենթարկել: Հետևաբար, «Ուիլիամի ընդունումը իրականում ընտրություն չէր... այն անհրաժեշտությունից բխող քայլ էր, անհրաժեշտություն՝ բարոյական ամենախիստ իմաստով»⁸:

Փրայսը գտնում էր, որ գահընկեցության ժամանակ Հակոբ 2-րդ բռնակալը վնասվել էր, և ժողովուրդը վերահաստատել էր իր իրավունքները: Բըրքի կարծիքով, Համայնքների պալատի և Հակոբի միջև պայմանավորվածություն էր եղել, և դա խախտելու հետևանքով Հակոբը հեռացվել էր գահից: Որքան էլ որ այն բացառիկ դեպք էր, ամեն պարագայում «գահը ազատ» էր մնացել, ինչն այս գործընթացի ականա արդյունք էր: «Անգլիան արքայազուրկ էր մնացել»⁹: Այնուամենայնիվ, «անհրաժեշտությունից բխող այս քայլը» շատ սահմանափակ կիրառական նշանակություն պետք է ունենա հաջորդող սերունդների համար: Հետևաբար, ըստ Բըրքի, 1688 թ. ոչ մի արմատական փոփոխություն չէր մտցրել բրիտանական սահմանադրության մեջ: Այն իրագործվել էր «առանց ողջ քաղաքացիական և քաղաքական կառույցը կազմաքանդելու»: Հեղափոխությունն իրականացվել էր ըստ «պահպանման և շտկման» երկու սկզբունքների և «հին օրենքների ու ազատությունների և այն հին կառավարման համակարգի պահպանման համար, որն օրենքի և ազատության միակ երաշխիքն էր»: Բըրքն ընդգծում է, որ «մինչ օրս անցկացված բոլոր բարեփոխումները հնի (antiquity) վկայակոչման սկզբունքի հիման վրա են եղել»¹⁰: Այսինքն՝ 1688 թ. հեղափոխությունը ներքաղաքական բարեփոխումներ իրականացնելու օրինակ չի կարող ծառայել: Հեղափոխությամբ ժողովրդի կողմից միապետ չի ընտրվել: Այն նաև չի կարելի ներկայացնել որպես ֆրանսիական հեղափոխությունն արդարացնող պատմական օրինակ:

«Ստորումների» հաջորդ հիմնական շեշտադրումներից էր քաղաքական ներկայացվածության հարցը: Փրայսի և մյուս արմատականների պահանջներից մեկն այն էր, որ Համայնքների պալատում քաղաքական ներկայացվածությունն անբավարար էր, և նման պառլամենտը չէր կարող ներկայացնել ողջ բնակչությանը: Ներկայացվածության ընդլայնման կողմնակիցները երկու հիմնական փաստարկներ էին բերում: Նախ՝ նրանք գտնում էին, որ փոքր ընտրատարածքները հավասար կամ ավելի ներկայացուցիչներ չեն կարող ունենալ, որքան շարունակ ընդլայնվող արդյունաբերական քաղաքները (Մանչեսթեր, Բիրմինգհամ և այլն), և երկրորդ՝ այս հարցում խախտվում էր անաչառության սկզբունքը: Վերջին փաստարկը Բըրքի համար ամենամտահոգիչն էր, քանի որ այն ենթադրում էր ժողովրդի ինքնիշ-

⁸ Edmund Burke, *Reflections on the Revolution in France, a Critical Edition* (ed. J.C.D. Clark), Stanford, 2001, p. 164-165, 173.

⁹ Նույն տեղում, էջ 170:

¹⁰ Burke, *Reflections*, p. 258.

խանության սկզբունքը: Փրայսը դեռևս 1776 թ. հավասարության նշան էր դնում ազատության և քաղաքական մասնակցության միջև: Ընդգծելով ազատության չորս տեսակներ՝ ֆիզիկական, բարոյական, կրոնական և քաղաքացիական, նա նշում էր, որ կա մի ընդհանրություն, որ ներհատուկ է նրանց բոլորին, «այն է՝ ինքնադեկլարման կամ ինքնակառավարման գաղափարը»¹¹: Քանի որ ազատությունը, ըստ Փրայսի, բնական իրավունք է, հետևաբար, քաղաքացիական ազատությունը կամ քաղաքական մասնակցությունը նույնպես բնական իրավունք է:

Այս կարգի փաստարկները կամ պահանջները 18-րդ դարավերջին Անգլիայում գնալով դառնում էին հաճախակի: Ըստ այդմ, ֆրանսիական հեղափոխության գործոնը Անգլիայում պետք է որ սրեր ներքաղաքական լարվածությունը: Այն ոգևորել էր ոչ միայն արմատականներին, այլև չափավոր վիգերին, որոնք ապագայում ավելի արմատական փոփոխություններից խուսափելու համար կոչ էին անում բարեփոխել ներկայացվածության համակարգը:

Բըրքն անհանգստանում էր, որ նման կոչերը վերջիվերջո կարող են Անգլիայում հանգեցնել սահմանադրական կարգերի փոփոխության: Ֆրանսիան հրաժարվել էր բրիտանական սահմանադրությունը օրինակ վերցնելուց, ուստի կազմավորել էր «ժողովրդավարական իշխանություններ»: «Ողջ պայքարը, ամբողջ գոտությունը առաջացավ այն բանից հետո, երբ նրանք փոխադարձ վերահսկելի կառավարման համակարգի փոխարեն նախընտրեցին բռնատիրական ժողովրդավարությունը»¹²: «Բռնատիրական ժողովրդավարություն», քանի որ «քաղաքացիների մեծ մասն ընդունակ է փոքրամասնության վրա կիրառելու ամենադաժան բռնաճնշումներ», իսկ «ժողովրդական հալածանքներն» ավելի ճնշող են, քան բռնակալ միապետինը»¹³: Ժողովրդական ինքնիշխանությունից սպասվում է երկու վտանգ: Առաջինը անհատական պատասխանատվության բացակայությունն է, քանի որ գործելով խմբով՝ նրանք ձերբազատվում են զսպիչ գործոններից մեկից՝ համբավի և գնահատանքի զգացողությունից: Երկրորդ, «քանի որ այն ամենաանամոթն է, ուստի և՛ ամենաանվախն է», որովհետև «ժողովրդական զանգվածը չափազանց մեծ է, որ պատժվի»: Նման իրավիճակներում կառավարիչները կորցնում են «բոլոր բարոյական սկզբունքները՝ պատվախնդրությունը, դատողունակությունը և բնավորության կայունությունը», և ժողովուրդը «դառնում է ժողովրդին քծնողների կամ նրբագեղ շողքորթների ստրկամիտ փառամոլության արհամարհելի զոհը»¹⁴:

Այս իրավիճակում «մարդու իրավունքները»՝ որպես գերիշխող փիլիսոփայություն, ըստ Բըրքի, կատարյալ անիշխանության էր վերածելու ֆրանսիական կառավարման համակարգը, քանի որ բանակում զինվորները չէին ենթարկվի իրենց հրամանատարներին, Ֆրանսիայի գաղութաբնակները կպահանջեին սահմանադրություններ, ազատ առևտուր, իսկ սևամորթները կըմբոստանային գաղութարարների դեմ, գյուղացին կմերժեր արիստոկրատ հողատերին հարկեր վճարել և այսպես շարունակ:

¹¹ Price, Political Writings, op.cit., p. 21-22.

¹² Burke, Reflections, p. 305.

¹³ Տե՛ս նույն տեղը, էջ 292:

¹⁴ Նույն տեղում, էջ 258:

Չետևաբար, մարդու իրավունքների սկզբունքից ծնված քաղաքական և սոցիալական հավասարության հասկացությունները բավականին վտանգավոր էին, քանզի «իրական անհավասարությունը ավելի էր խորացնում և դառնացնում այն»: Բըրքի համար գործող հիերարխիկ հասարակարգը ձեռնտու էր, քանի որ այն ապահովում էր «պաշտպանված, բավարարված, աշխատասեր և հնազանդ բնակչության գոյությունը»: Ավելին, նա գտնում էր, որ այն օգտակար էր նաև ստորին խավերի համար՝ նրանց հնարավորություն տալով ձեռք բերելու «իրական բարոյական հավասարություն»՝ ընդունելով, «որ առաքինությամբ երջանկությունը հասանելի է ցանկացած իրավիճակում»¹⁵: Այս բարոյական հավասարությունը, սակայն, չի կարող տարածվել քաղաքական, տնտեսական և հասարակական ոլորտների վրա: Իմաստուն օրենսդիրը պետք է հաշվի առնի մարդկանց միջև գոյություն ունեցող այն տարբերությունները, որոնք պայմանավորված են նրանց ծնունդով, կրթությամբ, մասնագիտությամբ, տարիքով, սովորույթներով և ունեցվածքով:

Բնական իրավունքները, ըստ Բըրքի, կարող են գործել բնական պայմաններում, քանի որ դրանք ամբողջովին անհամատեղելի են քաղաքացիական հասարակության պայմանների հետ: Դրանք վերանում են բնական վիճակից քաղաքացիական հասարակության անցնելուն պես, երբ հասարակությունն է որոշում, թե ինչ իրավունքներից ենք մենք օգտվելու¹⁶: «Քանի որ մարդը հասարակական էակ է, հասարակական բոլոր առավելությունները դառնում են նրա իրավունքները: Հասարակական իրավունքներն են մարդու «իրական իրավունքները», իսկ դրանք չէին ներառում քաղաքական մասնակցությունը»¹⁷: Մարդու ազատությունը, իրավունքները և պարտականությունները իրականացվում են հասարակության մեջ¹⁸: Քաղաքական մասնակցության հիմնական չափորոշիչը սեփականությունն էր և առաջին հերթին՝ հողային սեփականությունը: «Քանի որ ունակությունը եռանդուն և ակտիվ սկզբունք է, սեփականությունը՝ դանդաղկոտ, իներտ և վախվորած, այն երբեք չի կարող ապահով լինել ունակության ներխուժումներից, եթե անհամաչափ ձևով այն գերիշխող չլինի ներկայացվածության իմաստով..., սեփականության հարատևումը հասարակության հարատևում է ապահովում..., իհարկե, երբ սեփականությունը կործանվում է, բնական ազատությունն այլևս վերանում է»¹⁹: Արիստոկրատական ներկայացուցչության բըրքյան տեսությունը լիովին համընկնում էր ժամանակաշրջանի պահպանողական այն տեսակետների հետ, համաձայն որոնց քաղաքական իշխանության իրականացումը «հասարակ մարդկանցից անդին է»: «Օրինաստեղծ գործունեությունը շատ ավելի դժվար է և հասարակ ուղեղների բանը չէ: Ընդհանուր առմամբ, այն շատ ավելի վտանգավոր է նրանց համար, ովքեր չգիտեն դրանց սկզբունքները»²⁰:

Բըրքյան պահպանողականության հակաժողովրդավարական էությունը

¹⁵ Նույն տեղում, էջ 189:

¹⁶ Տե՛ս **F. P. Lock**, Edmund Burke, volume 2: 1784-1797, Oxford, 2006, էջ 263:

¹⁷ **Burke**, Reflections, p. 218.

¹⁸ Տե՛ս **Joseph Pappin III**, The Metaphysics of Edmund Burke, New York, 1993, էջ 172:

¹⁹ **Burke**, Reflections, p. 208-209.

²⁰ **R. Nares**, Principles of Government, London, 1792, p. 43.

ընդ դրսևորվել է նաև ֆրանսիական բանակի վիճակի նրա վերլուծություններում: Նրա կարծիքով, մի կողմից՝ մարդու իրավունքների գաղափարախոսությունը, իսկ մյուս կողմից՝ թագավորի իշխանության և ընդհանրապես ուժեղ իշխանության բացակայությունը բանակում աստիճանաբար առաջացնելու էին անհնազանդության տրամադրություններ: Ֆրանսիայում իշխանության վակուումը առաջացել էր ժողովրդավարական հեղափոխության հետևանքով, որը վերացրել էր հիերարխիկ հասարակարգը և կառավարությանը զրկել իշխանության գործառույթներն իրականացնելու հնարավորությունից: Ըստ այդմ, Բըրքը նախագուշացնում է Ֆրանսիայում ռազմական դիկտատուրայի հաստատման մասին:

Շեշտելով Ֆրանսիայում նոր իշխանությունների բռնատիրական բնույթը, անկարգապահ բանակի և ժողովրդի ներկայացուցչության գործոնները կապելով իրար հետ՝ Բըրքը մերժում էր Անգլիայում տարածում գտած այն պատկերացումը, թե ֆրանսիական հեղափոխությունը տապալել է բռնապետական միապետությունը և հաստատել անգլիական ազատություններ: Իր գաղափարներին ավելի համոզիչ երանգ տալու համար Բըրքն օգտագործում էր Անգլիայում առկա հակաբանակային տրամադրությունները: Ուստի նրա հարձակման թիրախը ոչ թե կանոնավոր բանակն էր, այլ ժողովրդավարական Ֆրանսիայում կանոնավոր բանակի առկայությունը: Բըրքը քննադատում էր ֆրանսիական ժողովրդավարական սկզբունքները, որոնք իշխանության ղեկին էին բերել նոր ուժեր, որոնց և ապագա զինվորական դիկտատորի բախումը նրան թվում էր անխուսափելի:

Հաշվի առնելով Անգլիայում և Ֆրանսիայում տիրող իրավիճակը՝ Բըրքի «Մտորումները» նորովի էին ներկայացնում այն հարցը, թե ինչպես կարող է ժողովրդավարացման գործընթացներից ծնունդ առնել ռազմական բռնատիրությունը: Այսինքն՝ ժողովրդավարական գաղափարների տարածումը անհրաժեշտորեն նվազեցնում էր քաղաքացիների ազատությունները: Բըրքն իր գաղափարներով մարտահրավեր էր նետում ֆրանսիացի հեղափոխականներին և ոչ մի զիջում չանելով այն չափավոր վիզերին, որոնք խորհուրդ էին տալիս իրագործել կանխարգելիչ բարեփոխումներ, Բըրքը պաշտպանում էր արիստոկրատական այն կարգերը, որոնք, ըստ նրա, դարեր շարունակ տիրում էին Անգլիայում:

Սակայն 19-րդ դարի Անգլիայում հանուն քաղաքական ներկայացվածության ընդլայնման շարժումը մեծ թափ ստացավ: Եվ եթե 1832 թ. ընտրական բարեփոխումներին պահպանողականները ցույց տվեցին անհաջող դիմադրություն, ապա 1867 թ. արդեն պահպանողական կառավարությունն էր ներկայացրել բարեփոխումների փաթեթը (թեև նախապես ներկայացված բարեփոխումների փաթեթը և պառլամենտի երկու պալատների կողմից հաստատված փաթեթը էապես տարբերվում էին, քանի որ ազատականները մեծ թվով փոփոխություններ էին մտցրել այնտեղ): Արդյունաբերական հեղափոխության հետևանքով մեծ փոփոխություններ էին տեղի ունենում Անգլիայում: Սոցիալ-տնտեսական դժվարություններին զուգահեռ՝ արձանագրվում էր արմատականության կտրուկ աճ: Եվ նման պայմաններում հեղափոխական զարգացումները կանխելու համար անհրաժեշտ էին բարեփոխումներ, այդ թվում՝ ընտրական ներկայացվածության ընդլայնման ոլորտում: Որքան ուժեղանում էր հասարակական կար-

ծիքի ազդեցությունը, այնքան քաղաքական ուժերը, այդ թվում և պահպանողականները, հակվում էին հանրային կարծիքը բավարարող միջոցառումների անցկացմանը²¹: Պահպանողական կառավարություններն ընդառաջ էին գնում սոցիալ-տնտեսական զարգացումների անխուսափելի ընթացքին, և իրենք էին ձեռնամուխ լինում այդ բարեփոխումներին:

Եիշտ է, ինչպես տեսանք Բըրքի մտտեցումներից, պահպանողական գաղափարախոսության ձևավորման հիմքերում հակաժողովրդավարությունը կարևորագույն տեղ էր գրավում, սակայն եթե ժողովրդավարությունը 18-րդ դարի վերջում սպառնալիք էր Անգլիայի համար, ապա սոցիալ-տնտեսական, քաղաքական փոփոխությունները 19-րդ դարում հետզհետե մեծացնում էին քաղաքական ներկայացվածության հրամայականը, և մեծանում էին կառավարման համակարգերի ժողովրդավարացման միտումները: Պահպանողական քաղաքական հոսանքն Անգլիայում այս առումով ճկունություն հանդես բերեց և 19-րդ դարում իր ձեռքը վերցրեց բարեփոխումների գործընթացը:

ТИГРАН МКРТЧЯН – Эдмунд Бёрк как идеолог английской антидемократии. – В конце XVIII века Эдмунд Бёрк, отец-основатель политического консерватизма, выразил глубокую обеспокоенность тем, как радикалы интерпретируют итоги Английской революции 1688 г. Радикалы утверждали, что власть исходит от народа. В контексте Французской революции эта и подобные ей идеи (о правах человека, расширении политического представительства, масштабных реформах) приобретали опасный характер. В трактате “Размышления о Французской революции”, оспорив теоретиков демократии, Бёрк обрисовал угрозы, какие сулит Англии новая система правления. Тем не менее коренные социально-экономические перемены вынудили различные английские правительства, в их числе и консервативные, проводить на протяжении XIX века реформы, неуклонно расширявшие политическое представительство.

TIGRAN MKRTCHYAN – Edmund Burke as the Ideologist of English Anti-Democracy. – The article presents the antidemocratic approaches of conservative political thought in England at the end of the eighteenth century, when Edmund Burke, the founding father of political conservatism, expressed his deep concerns over the English radicals’ interpretation of the 1688 English revolution, according to which the source of power emanates from the people. In the context of the French Revolution this and similar interpretations (of rights of man, broadening of political representation, large-scale political reforms) received a new impetus. Through his “Reflections on the Revolution in France” Burke is counter-arguing against the theorists of democracy, representing the threats emanating from that system of governance to England. Nevertheless, if in late 18th and early 19th century the English conservatives opposed political reforms, the drastic social-economic changes forced various governments of England, including the conservatives, during the 19th century to implement reforms, which also broadened the circles of political representation.

²¹ Տե՛ս **Asa Briggs**, *The Age of Improvement 1783-1867*, London, 2000, էջ 440: